ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 95

«08» 11 2022 թ.Ք. Երևան

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ Հայկ Մարտիրոսյանի 2022 թվականի հոկտեմբերի 24-ի՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին հասցեագրված N Ն/10.1/7432-2022 զեկուցագիրը՝

ՊԱՐԶԵՑԻ՝

2022 թվականի օգոստոսի 23-ին գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի հանձնարարությամբ հայտարարվել է գնանշման հարցում՝ պայմանավորված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության շենքային պայմանների բարելավման անհրաժեշտությամբ: Նշված հարցման արդյունքներն ամփոփվել են 2022 թվականի սեպտեմբերի 9-ին, որից հետո էլ՝ 2022 թվականի սեպտեմբերի 30-ին կնքվել է աշխատանքների ձեռքբերման պայմանագիր: Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի պաշտոնավարման ժամկետը լրացել է 2022 թվականի սեպտեմբերի 15-ին և նույն օրը նորընտիր գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ստանձնել է իր լիազորությունները:

Հաշվի առնելով «Համակարգչային ծառայություններ» հոդվածով չօգտագործված միջոցների առկայությունը՝ 2022 թվականի սեպտեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ Հայկ Մարտիրոսյանի նախաձեռնությամբ կազմվել է 2022 թվականի բյուջեում նախահաշվի հոդվածային փոփոխության նախագիծ՝ 03.10.2022 թվականի ամսաթվով՝ առանց գլխավոր դատախազի հաստատմանը ներկայացնելու: 2022 թվականի հոկտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ Սուսաննա Գրիգորյանը համակարգում կատարել է փոփոխություն: 2022 թվականի հոկտեմբերի 12-ին վերը նշված հոդվածային փոփոխության նախագծում կրկին կատարվել է փոփոխություն և նախապատրաստվել նոր նախագիծ՝ առանց գլխավոր դատախազի հաստատմանը ներկայացնելու: 2022 թվականի հոկտեմբերի 18-ին կազմվել է նախահաշվի ամսաթվի փոփոխություն, որն էլ ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվել է գլխավոր դատախազի հաստատմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով, «Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման հավելվածի 8-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ Հայկ Մարտիրոսյանի նկատմամբ նշանակել ծառայողական քննություն, որի իրականացման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով՝
   1) Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղար Համայակ Նավասարդյան,
   2) Գլխավոր դատախազի խորհրդական Միեր Ափրիկյան (համաձայնությամբ),
   3) Գլխավոր Դատախազի խորհրդական Տաթևիկ Սարուխանյան (համաձայնությամբ):
2. Աշխատանքային խմբին՝ պարզաբանել Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ Հայկ Մարտիրոսյանի զեկուցագրում նշված հանգամանքները և ծառայողական քննության արդյունքների հիման վրա կազմված եզրակացությունը ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:
3. Աշխատանքային խմբին՝ ծառայողական քննությունն անցկացնել ծառայողական քննություն նշանակելու մասին իրավական ակտը ստորագրելու պահից 15 օրվա ընթացքում:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ